

ՍԻՈՆ, ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

Ե. ՏԱՐԻ—ՆՈՐ ՇՐՋԱՆ

1931—ԱՊՐԵԼ

ԹԻԻ 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՅ

Նո՛րէն կը ճնշեցնենք անապառ ներհնչումի անհին այս երգը, ձայնակցելով բազում դարերու եւ բազում ժողովուրդներու :

Ո՛չ բանաստեղծական պատկերի մը խորհրդանշանական մէկ ներկայացումն է սակայն ան, զմեզ երեսակայութեան անիրական քեներուն վրայ հեծցընելու միայն ծառայող, ո՛չ ալ առհասական զգացումին ձօնուած բարեպաշտական տուրք մը մեր կողմէ, հաստատարող բանաձեւերու եւ եզրերու երկչոտութեան կապանքներուն ներքեւ զմեզ պարպելու եւ չորցնելու ծառայող: Ե՛րբեք: Այս երկուքէն ո՛չ մին եւ ո՛չ միւսը:

Պատմական իրողութեան մը մեր հոգիներուն մէջ վառած լոյսին յորդումն է այս երգը, զոր գնահատել կարենալու համար լոյսին երաժշտութեան զգայուն ականջ պէ՛տք է ունենալ:

Լոյսին երաժշտութի՛ւնը, որ լոյս գերեզմանէն արձագանգեց, եւ աշխարհ մ'ամբողջ հմայեց:

Ո՛չ կախարդանք մըն է այս երգը, ո՛չ ալ օրօր մը: Ծաւալուն ու երկածիք այդ յանկերգը անընդի փառաբանութիւնն է կեանքի յաղթանակին՝ մահուան վրայ: Ո՛հ, այս մեծ բառերուն պարունակութեան ուշադրութեամբ անդրադառնանք: Յարութիւնը Աստուծոյ ծրագրին, Տիեզերքի վախճանին անհրաժեշտ մէկ մասն է: Մարդը պիտի ապրի՛, կեանք ունենայ: Համագոյք ո՛չ ունայնութիւն է, ո՛չ ալ դիպում: Մարդը՝ եւս աւելի չէ: Մարդ պէ՛տք է ապրի: Քրիստոս մարմնացումն է կեանքի: «Ես եմ Յարութիւն եւ կեանք» ըսաւ Ան, ապրող Յարուցեալը:

Եթէ այդ կեանքը՝ «Քրիստոս հեմարիս չէ՝ ուրեմն հեմարսութիւնը սուս է»:

Լոյսի Հարսը Եկեղեցին յաւիտեան պիտի հռչակէ Քրիստոսը ձեմարիս, Քրիստոսը Յարուցեալ:

Սիոնի՛ որդիք, օ՛ն արքիցի՛ք. աւետեցի՛ք Լոյսի Հարսին քէ Յարութիւն առաւ Փեսաղ. իշխանաբար յաղթեց մահուան. կու գայ պսակել ըզՔեզ փառով: Առջե՛ւն ելիւ պրննազարգում. նոր երգ երգէ Յարուցեալին, ննջածներու կեանքի Պատիւին:

ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍ